



ADVANCED  
SOCIAL  
TECHNOLOGIES

# Քաղաքականության Մոդելավորման Վերլուծություն

*ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ*

ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստան

2012թ.

# Կրթության Ոլորտի Քաղաքականության Մոդելավորման Հաշվետվություն

## Բովանդակություն

Ներածութեան ԵՎ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ .....	6
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ .....	12
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	17
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	18
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	19
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ .....	31
ՔՆՆԱՐԿՈՒՄ.....	33
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ .....	34
ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ.....	35

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՂԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Վերջին երկու տասնամյակների տնտեսական և սոցիալական անկումներն ազդեցություն են թողել երկրի բարձրագույն կրթության ոլորտի վրա: Բարձրագույն կրթության հասանելիությունն այժմ սերտորեն կապված է տնային տնտեսության աղքատության մակարդակի հետ: Սա, իր հերթին, ազդում է տնային տնտեսությունների՝ աղքատությունը հաղթահարելու հնարավորության վրա և այդպես շարունակ: Նման իրավիճակին նպաստել են մի շարք գործոններ, որոնցից մի քանիսը կապված են կրթական համակարգի, իսկ մյուսները՝ ֆինանսական ռեսուրսներին պոտենցիալ շահառուների մատչումի հետ:

Հայաստանում բարձրագույն կրթության համակարգում ներգրավված են մոտ 111000 ուսանողներ, որոնցից 91400 ներգրավված են պետական, իսկ 19600՝ մասնավոր բուհերում: Պետական բուհերում ներգրավված 91400 ուսանողներից միայն 19600-ն են իրենց ուսման համար ստանում պետական նպաստներ (կրթաթոշակ), իսկ մնացած 72800 ուսանողները վճարում են ուսման վարձ: Ավելին, գոյություն ունի կրթաթոշակի միայն մեկ ձև՝ 100%-անոց՝ կրթաթոշակ ստացող 19600 ուսանողների համար:

Հիմնվելով նախկինում կատարված ուսումնասիրության վրա, մենք բացահայտել ենք բնակչության ամենաաղքատ քվինտիլին բարձրագույն կրթության բաշխման զգալի անհավասարակշռություն, մինչդեռ կրթության այլ տեսակների օգուտների բաշխումը խնդրահարույց վարք չի ցուցաբերել<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է քաղաքականության ճշգրտում՝ ամենացածր քվինտիլների շահառուների համար բարձրագույն կրթության հասանելիությունը սահմանափակող բոլոր առանցքային խնդիրները լուծելու նպատակով:

Վերը նշված անհավասարակշռությունը համարվում է այն սկզբունքի հետևանքը, ըստ որի բուհերի ուսանողներին պետական սուբսիդիաների բաշխումը 100%-ով կատարվում է հիմնվելով ուսանողի արդյունքների վրա: Այս սկզբունքը եկել է դեռևս Խորհրդային Միության ժամանակաշրջանից և ոչ մի փոփոխություն չի կրել, չնայած այն փաստին, որ Խորհրդային Միության ժամանակաշրջանի համեմատությամբ այժմ ուսանողների 80%-ը վճարովի սկզբունքով են սովորում և կառավարության ռեսուրսները բավականացնում են ուսանողների միայն մոտ 20%-ի համար:

Հայաստանի կրթական համակարգի համար Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից 2009-2010թթ. իրականացված Օգուտների Բաշխման Վերլուծությունը բացահայտեց բարձրագույն կրթության ոլորտում պետական սուբսիդիաների շատ


<sup>1</sup> Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս «Գրականության ուսումնասիրություն» բաժինը

անհավասարաչափ բաշխում՝ բնակչության եկամտային քվինտիլների միջև: Ամենաաղքատ քվինտիլը ստացել էր նշված սուբսիդիաների մոտ 8%, մինչդեռ ամենահարուստ քվինտիլը՝ մոտ 40%<sup>2</sup>:

Պետական սուբսիդիաների բաշխման նման անհավասարաչափությունը կարող է բացատրվել ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլների ներգրավվածության մակարդակների միջև առկա լայն անջրպետով. դրանք համապատասխանաբար կազմում են 8% և 38%:


Գծապատկերներ 1-ում և 2-ում ներկայացված դիագրամները շատ նման են, ինչը ապացուցում է վերը նշված հայտարարությունը՝ կապված ներգրավվածության բաշխման և պետական սուբսիդիաների բաշխման միջև առկա կապի հետ:

**Գծապատկեր 1: Բարձրագույն կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, 2009 թ.**



<sup>2</sup> Օգուտների Բաշխման Վերլուծություն, էջ 15

**Գծապատկեր 2. Բարձրագույն կրթության ոլորտում ներգրավվածության բաշխումն ըստ քվինտիլների, 2009 թ.**



Եկամտային քվինտիլների միջև ներգրավվածության բաշխման այսպիսի հսկայական անհամամասնությունը ենթադրաբար հանդիսանում է մի շարք գործոնների համակցված ազդեցության հետևանք, ինչպիսիք են՝ բարձր որակի ավագ միջնակարգ կրթությանը (ավագ դպրոց) և մասնավոր ուսուցիչների միջոցով բուհերի ընդունելության քննություններին լավ պատրաստություն ստանալուն անհավասար մատչում ունենալը, ուսանողներին պետական սուբսիդիաների բաշխման մեխանիզմում դեպի աղքատամետ քաղաքականության բացակայությունը, բուհական կրթությունը ֆինանսավորելու համար այլընտրանքային աղբյուրների պակասը՝ ցածր և միջին եկամուտ ունեցող ուսանողների համար:

Սույն հաշվետվությունը նպատակն է՝ լուծումներ առաջարկել այս խնդրի համար՝ մի շարք ասպեկտների և գործոնների դիտարկման միջոցով (ինչպիսին են՝ մինչբուհական ուսուցումը, մատչումը ֆինանսական միջոցներին և պետական սուբսիդավորման համակարգում ներգրավվելու չափանիշները), որոնցով առաջնորդվում են տարբեր եկամտային խմբերը՝ բարձրագույն կրթությունում ներգրավվելու մասին որոշում կայացնելիս:

Սույն հաշվետվությունում կփորձենք տրամադրել քաղաքականության փոփոխությունների հիմնավորումներ, ինչպես նաև առկա քաղաքականության տարբերակներ, որոնք կբարելավեն բարձրագույն կրթության հասանելիության առումով առկա անհավասարակշռությունը: Փորձ կկատարվի նաև գնահատելու յուրաքանչյուր միջամտության հնարավոր ազդեցությունը, ինչպես նաև դրանց բոլորի համախառն ազդեցությունը:

Իրականացված մոդելավորման վերլուծությունը գնահատում է ներգրավվածության մասով խորհուրդ տրվող քաղաքականության միջոցառումների հնարավոր ազդեցությունը, որոնք ներառում են առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծումը, արդյունքների և կարիքների վրա հիմնված կրթաթոշակների տրամադրումը և ուսանողական վարկերի ծրագրի մեկնարկը՝ որպես հասարակության ցածր եկամտով խմբերի՝ բարձրագույն կրթության ոլորտին մասնակցությունը մեծացնելու միջոցներ:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**


Համաձայն Համաշխարհային Բանկի կողմից 2008թ. մայիսին պատրաստած՝ Հայաստանի Կրթական Համակարգի համար Հանրային Ծախսերի Ուսումնասիրության, Հայաստանում տնային տնտեսությունների միջև առկա է բուհերում ներգրավվածության բավականին մեծ անհավասարաչափություն. գերներկայացված են հարուստ տնային տնտեսությունները: Ստորև ներկայացվող գծապատկերները ցույց են տալիս կրթական տարբեր մակարդակներում ներգրավվածության բաշխումը բնակչության 5 եկամտային քվինտիլների միջև<sup>3</sup>:

Ինչպես տրված է Գծապատկեր 3-ում, բոլոր քվինտիլների հիմնական դպրոցի տարիքի (1-8 դասարաններ) երեխաների համարյա 100 տոկոսը ներգրավված է կրթության որևէ մակարդակում (մինչ-տարրականից մինչև ցածր միջնակարգ): Մակայն, առկա են հստակ անհամաչափություններ նախադպրոցական և բարձր միջնակարգ (ավագ դպրոց) կրթության միջև, որոնք նույնիսկ ավելի են մեծանում բարձրագույն կրթության դեպքում:

---

<sup>3</sup>Հայաստանի Կրթական Համակարգում Հանրային Ծախսերի Ուսումնասիրություն, Համաշխարհային Բանկ, Մայիս 2008թ., Գլուխ 5. Հավասարություն, էջեր 42-43


**Գծապատկեր 3: Ներգրավվածության ցուցանիշները՝ տարբեր կրթական մակարդակների համար, 2005թ.**



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն, Կյանքի ստանդարտների ինտեգրված ուսումնասիրություն (ISLS), 2005թ.

Ազգային վիճակագրական տվյալները նույնպես աջակցում են այս արդյունքին: Համաձայն Գծապատկեր 4-ի, ընդհանուր միջնակարգ կրթությունը բավականին հավասարաչափ է բաշխված՝ փաստացի ունենալով շատ թեթև աղքատամետ ուղղվածություն, երբ տնային տնտեսությունների ամենաաղքատ 40 տոկոսին բաժին է ընկնում ներգրավվածության 42 տոկոսը: Սակայն, Հայաստանում, բուհերում ներգրավվածությունը բավականին անհավասարաչափ է բաշխված տնային տնտեսությունների միջև. հարուստ տնային տնտեսությունները գերներկայացված են:

**Գծապատկեր 4: Տարբեր կրթական մակարդակներում ներգրավվածության բաշխումը տնային տնտեսությունների միջև, 2005թ.**




Աղբյուրը՝ Ազգային Վիճակագրական Ծառայություն, Կյանքի ստանդարտների ինտեգրված ուսումնասիրություն (ISLS), 2005թ.

Հաշվի առնելով ամբողջ բնակչությունը, ստորև բերված Գծապատկեր 5-ը ցույց է տալիս, որ ավելի աղքատ տնային տնտեսությունների անհատներն անցյալում ստացել են ավելի ցածր մակարդակների կրթություն: Օրինակ՝ ամենաաղքատ քվինտիլը ներկայացնող անհատների միայն 7.2 տոկոսն է մասնակցել բարձրագույն կրթությանը՝ համեմատած ամենահարուստ քվինտիլի նմանատիպ անհատների 28.8 տոկոսի հետ<sup>4</sup>:

<sup>4</sup>Հայաստանի Կրթական Համակարգում Հանրային Ծախսերի Ուսումնասիրություն, Համաշխարհային Բանկ, Մայիս 2008թ., Գլուխ 5. Հավասարություն, էջ 41



**Գծապատկեր 5: Ավելի աղքատ տնային տնտեսությունները ներկայացնող անհատներն ստացել են ավելի ցածր մակարդակների կրթություն, 2005թ.**



Աղբյուրը՝ Ազգային Վիճակագրական Ծառայություն, Կյանքի ստանդարտների ինտեգրված ուսումնասիրություն (ISLS), 2005թ.

Նշում. Ներառվել են միայն վեց և ավելի տարեկան անձինք:

Այս միտումը ցույց է տալիս բուհեր ընդունվելու համար պատրաստվելու անհավասար հնարավորություններ աղքատների և հարուստների միջև, ինչպես նաև դեպի աղքատներն ուղղված պետական քաղաքականության պակաս՝ բարձրագույն կրթության համար պետական սուբսիդիաների հատկացման գործում:


Սույն անհավասարությունն, իր հերթին, ենթադրաբար հանդիսանում է ստորև ներկայացված պատճառների համակցված արդյունքը.

- i. կրթության ցածր որակ ընդհանուր միջնակարգ դպրոցների (12-ամյա կրթություն ապահովող, որոնք ներկայումս առավել մեծ քանակ են կազմում Հայաստանում) բարձր դասարաններում (10-12 դասարաններ)՝ հատկապես գյուղական համայնքներում: Մա բերում է բուհերում հայտնվելու ավելի լավ հնարավորությունների հարուստների համար, որոնք կարող են փոխհատուցել ցածր որակը բարձր դասարաններում՝ վճարելով մասնավոր ուսուցչի համար, աղքատամետ բաշխման մեխանիզմների պակաս՝ բուհերի ուսանողներին պետական նպաստների (կրթաթոշակների) բաշխման գործում,
- ii. ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից ուսանողների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների բացակայություն:

Հայաստանի կրթության, առողջապահության և ջրային տնտեսության ոլորտներում քաղաքականությունների մոդելավորման վերլուծությունների իրականացման շրջանակներում՝ Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից 2011թ. մայիսին իրականացված՝ տնային տնտեսությունների ամենավերջին հարցումը կրկին բացահայտել է բարձրագույն կրթության ոլորտում ներգրավվածության

անհավասարաչափ բաշխում բնակչության եկամտային քվինտիլների միջև: Ստորև բերված Գծապատկեր 6-ում ներկայացված են հարցման արդյունքները: Համեմատելով նախորդ հարցումների արդյունքների հետ՝ կարող ենք տեսնել, որ տեղի է ունեցել ներգրավվածության բաշխման բարելավում երկրորդ և երրորդ քվինտիլների համար՝ մասնակիորեն չորրորդ և հիմնականում հինգերորդ քվինտիլների հաշվին: Այնուամենայնիվ, չկա համարյա ոչ մի բարելավում առաջին (ամենաաղքատ) քվինտիլի մասով: Այսպիսով, չնայած ավելի երկարաժամկետ ժամանակահատվածի համար չապացուցված լինելու փաստին, կարելի է ենթադրել, որ վերջին տարիներին իրականացված քաղաքականության միջոցառումներն ավելի արդյունավետ են եղել միջին քվինտիլների և նվազ արդյունավետ՝ ամենաաղքատի համար:

**Գծապատկեր 6. Բարձրագույն կրթությանը ներգրավվածության բաշխումը տնային տնտեսությունների միջև, 2011թ.**



«Հանրային Ծախսերի Հաշվետվողականության Բարելավման Նպատակով Ինստիտուտների Զարգացման» ծրագրի բոլոր 15 անդամ կազմակերպությունների կողմից 2009թ. մշակված՝ Օգուտների Բաշխման Վերլուծությունների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ համարյա բոլոր երկրներում առկա է բուհերում ներգրավվածության անհավասար բաշխում: Ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում ամփոփված է բուհերում ներգրավվածության բաշխումը ծրագրի անդամ բոլոր երկրներում: Ինչպես տեսնում ենք աղյուսակից, նույնիսկ ունենալով ներգրավվածության այդպիսի խնդրահարույց բաշխում՝ Հայաստանն ունի երրորդ ամենալավ բաշխումը բոլոր 15 երկրների շարքում:

Աղյուսակ 1. Բուհերում ներգրավվածության բաշխումը եկամտային քվինտիլների միջև՝ GDN ծրագրի անդամ երկրներում

	Ք1	Ք2	Ք3	Ք4	Ք5
Հնդկաստան	18.06	26.65	20.17	19.80	15.32
Արգենտինա	8.28	13.08	19.70	29.58	29.36
Հայաստան	8.20	12.43	17.40	24.32	37.65
Ֆիլիպիններ	7.25	12.61	19.01	28.34	32.79
Գվատեմալա	5.86	6.48	11.22	15.09	61.35
Պերու	4.93	8.75	12.05	25.01	49.25
Ինդոնեզիա	4.88	6.54	7.59	15.65	65.34
Բանգլադեշ	4.32	9.25	14.94	22.17	49.31
Ուզանդա	3.71	5.85	6.00	15.37	69.08
Նեպալ	3.45	3.45	6.90	15.52	70.69
Մեքսիկա	2.39	7.01	14.70	24.80	51.09
Տանզանիա	2.13	9.74	15.65	15.78	56.69
Գանա	1.70	5.50	15.90	19.80	57.10
Քենիա	0.00	2.80	2.80	15.10	79.30

Ներգրավվածության բաշխման հավասարաչափության առումով ամենահետաքրքիր արդյունքներն ունի Հնդկաստանը, որտեղ ամենաաղքատ քվինտիլի մասնաբաժինը նույնիսկ ավելի մեծ է քան ամենահարուստինը: Չնայած հաշվետվությունում նշվում է, որ ներգրավվածության մասին տվյալները ներառում են միայն պետական դպրոցներն ու բուհերը, կարելի է ենթադրել, որ ներդրված են արդյունավետ քաղաքականություններ, որոնք ապահովում են պետական բարձրագույն կրթությունից օգտվելու հավասար հնարավորություն ավելի աղքատ ընտանիքների համար: Սակայն, կարող են լինել նաև այլ լրացուցիչ գործոններ, որոնք հանգեցնում են օգուտների բաշխման նման մոդելին:

2009թ. դրությամբ Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտին ուղղված ընդհանուր պետական ծախսերը կազմել են 7,867 մլն. ՀՀ դրամ, ինչը համարժեք է 21.65 մլն. ԱՄՆ դոլարին, որը 2009թ. կազմել է կրթության ոլորտի պետական ծախսերի մոտ 7.3%, ընդհանուր պետական ծախսերի մոտ 0.85% և 2009թ. անվանական ՀՆԱ-ի մոտ 0.25%<sup>5</sup>: Հակառակ այս թվերին, 2009թ. ՏՀԶԿ երկրների համար բարձրագույն կրթությանն ուղղվող միջին պետական ծախսերը կազմել են կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի մոտ 23.8%, ընդհանուր պետական ծախսերի մոտ 3.1% և անվանական ՀՆԱ-ի մոտ 1.4%<sup>6</sup>: Այս համեմատությունը ցույց է տալիս Հայաստանի և ՏՀԶԿ երկրների միջև բարձրագույն կրթության ֆինանսավորման հսկայական տարբերությունը:

<sup>5</sup> Ծրագրային Բյուջետավորման Վերլուծություն, 2010թ.

<sup>6</sup> Հայացք Կրթությանը 2012, ՏՀԶԿ Ցուցանիշներ (Education at a Glance 2012, OECD Indicators), [http://www.oecd.org/edu/EAG%202012\\_e-book\\_EN\\_200912.pdf](http://www.oecd.org/edu/EAG%202012_e-book_EN_200912.pdf)

Բացի դրանից, բարձրագույն կրթության ոլորտի ամբողջ ֆինանսավորումն իրականացվում է արդյունքների վրա հիմնված կրթաթոշակների տեսքով, որոնք տրվում են մոտ 20000 ուսանողների՝ պետական բուհերի մոտ 73000 ուսանողների ուսման վարձերի բեռը թողնելով տնային տնտեսությունների վրա (ինչը կազմում է բարձրագույն կրթության ընդհանուր ծախսերի մոտ 78%): Կրկին Հայաստանի դեպքի հետ համեմատությամբ, ՏՀԶԿ երկրներում բուհերի ուսանողների մոտ 55% ստանում են պետական ֆինանսական աջակցություն, որից 16%՝ ուսանողական վարկերի, 26%՝ կրթաթոշակների/դրամաշնորհների ձևով, իսկ 13%՝ նշված երկու ձևերով: Ավելին, ուսանողներին և տնային տնտեսություններին ուղղվող ֆինանսական աջակցությունը կազմում է բարձրագույն կրթությանն ուղղվող պետական ծախսերի ընդամենը 21%, իսկ ֆինանսավորման մնացած մասն ուղղակիորեն գնում է բուհերին:

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Քաղաքականության մոդելավորման վերլուծության քաղաքականության նպատակն է կառավարության համար միջամտությունների օպտիմալ մոդելի սահմանումը՝ բնակչության ամենաադրատ 20%-ի համար բարձրագույն կրթությունում ներգրավվածության առնվազն 15%-ի հասնելու նպատակով:

Մեր թիմը սահմանել է քաղաքականության այլընտրանքներ, որոնք առանձին լուծում են առաջարկում քաղաքականության խնդրի համար: Չնայած նրան, որ քաղաքականության այլընտրանքները գնահատվում են առանձին, կառավարությունը կարող է ընտրել միջամտությունների այնպիսի խառնուրդ, որն ամենահարմարն է առաջարկված նպատակին հասնելու, այսինքն՝ **ամենացածր քվինտիլից ներգրավված շահառուների %-ի աճի համար**: Նման որոշում կայացնելիս, կառավարությունը պետք է հստակ իմանա յուրաքանչյուր այլընտրանքի հարաբերական արդյունավետությունը (օրինակ՝ ինչ ծախսեր կպահանջվեն 1-ին քվինտիլից ներգրավվածությունը 1 տոկոսային կետով ավելացնելու համար): Այս քաղաքականության մոդելավորումը փորձում է մոդելավորել և սահմանել այդ հարաբերությունը, իսկ արդյունքները կտրամադրվեն կառավարությանը:

Ցավոք, քանի որ Համաշխարհային Բանկի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՏՀԶԿ-ի կրթության վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը չտրամադրեց տվյալներ եկամտային քվինտիլների միջև ներգրավվածության բաշխման վերաբերյալ՝ մեր 15% չափանիշի հետ համեմատելու նպատակով, ապա մեր ընտրած չափանիշն ինչ որ առումով պայմանական է: Սակայն վերը քննարկված՝ Հնդկաստանի օրինակը որոշակի հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այս չափանիշը բավականին իրատեսական է:

## *Ավագ դպրոցի ծրագիր*

Ընդհանուր միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում՝ հատկապես գյուղական բնակավայրերում, կրթության ցածր որակը բերում է բուհերի ընդունելության քննությունները հաջող հանձնելու և բարձրագույն կրթության նպատակով պետական նպաստներ և կրթաթոշակներ ստանալու համար պատրաստվածության մակարդակի ավելի մեծ տարբերությունների՝ ավելի աղքատ և հարուստ ընտանիքների ուսանողների միջև:

Ընդհանուր միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում ուսուցման մակարդակը բարելավելու նպատակով Հայաստանի կառավարությունը որոշել է ստեղծել առանձին գործող ավագ դպրոցների ցանց՝ ընտրելով 100-150 ընդհանուր միջնակարգ դպրոցներ ամբողջ երկրի տարածքում և դրանք վերափոխելով առանձին գործող ավագ դպրոցների, որոնցում ապագայում կլինեն միայն բարձր դասարանները (10-12): Միաժամանակ, այս նոր ավագ դպրոցների շուրջ գտնվող մնացած 12-ամյա ընդհանուր միջնակարգ դպրոցները վերափոխվեցին հիմնական դպրոցների (1-ից մինչև 9-րդ դասարանների համար): Այս գործընթացը ենթադրում է լայնածավալ ներդրումներ նշված ավագ դպրոցների ենթակառուցվածքներում, նոր դասագրքեր, նոր ուսումնական պլան, ուսուցիչների ուսուցում և որակավորում, ինչպես նաև այդ դպրոցների ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ավելացում: Մեկ դպրոց ունեցող փոքր և շատ հեռավոր գյուղերը կպահպանեն իրենց ընդհանուր միջնակարգ դպրոցները (1-12 դասարաններ): Կառավարությունը նոր է սկսել այս ծրագրում ներդրումների իրականացումը և դրա հաջող ավարտը զգալիորեն կախված է անհրաժեշտ ապագա ներդրումների իրատեսական գնահատումից և այդ ռեսուրսների՝ նշված քաղաքականության իրականացմանն ուղղելու քաղաքական կամքից:

2009թ. բուհական ընդունելության քննությունների արդյունքները ցույց տվեցին, որ նոր ստեղծված ավագ դպրոցների շրջանավարտների 64% դիմել է բուհեր և 58% ընդունվել է, մինչդեռ ողջ երկրի համար նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար մոտ 41% և 28%:

Այսպիսով, ավագ դպրոցներում կրթության որակի բարելավման ոլորտում կառավարության քաղաքականության միջամտություններում երևում է կապ՝ վերը նշված ընդհանուր քաղաքականության նպատակի հետ:

## ***Բուհերի ուսանողների պետական նպաստներ***

Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական նպաստների ներկայիս մեխանիզմը հիմնականում արդյունքների վրա հիմնված մեխանիզմ է, այսինքն՝ նպաստները տրվում են ընդունելության քննության ժամանակ լավագույն արդյունքները ցուցաբերած դիմորդներին: Ավելին, ընդունելության քննություններից առաջ կառավարությունը որոշում է նպաստ ստացողների թիվն ըստ յուրաքանչյուր մասնագիտության և յուրաքանչյուր պետական բուհի: Այս մեխանիզմում կատարված հիմնական բարելավումներից մեկն է հանդիսանում ռոտացիայի սկզբունքի ներդրումը բուհական կրթության բարձր կուրսերում. այժմ նպաստներն անցնում են ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներից՝ լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողներին՝ հիմնվելով քննությունների տարեկան արդյունքների վրա:

Սակայն, ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված պետական նպաստների համակարգը հաշվի չի առնում նպաստ ստացողի ընտանիքի համար դրա իրական կարիքը՝ հանգեցնելով ֆինանսական պատճառներով բուհական ուսումից հրաժարվելուն: Հրաժարվելու նման դեպքերը կարելի է դասակարգել 3 տիպերի.

- i. նրանք, ովքեր հեռանում են բուհից ուսման ընթացքում, քանի որ չեն կարող վճարել ուսման վարձերը,
- ii. նրանք, ովքեր ընդունվում են բուհեր, սակայն պետական նպաստ չեն ստանում և չեն կարողանում միջոցներ գտնել նույնիսկ առաջին տարվա ուսման վարձի համար
- iii. նրանք, ովքեր չեն դիմում բուհեր՝ միջոցների և պետական նպաստ ստանալու հույսի բացակայության հետևանքով:

Իրականում, կառավարության աջակցությունն ստացողների մեծամասնությունը ներկայացնում են երկու ամենահարուստ քվինտիլները, քանի որ բուհեր դիմելուց առաջ նրանք լրացուցիչ առավելություն են ունեցել՝ ավելի որակյալ և թանկ ուսուցիչների միջոցով ուսուցում ստանալու առումով: Ամեն դեպքում, անհրաժեշտ է վերանայել այս համակարգը և ներառել ընտանիքի եկամուտի գործոնը և՛ բուհ ընդունվելու փուլում, և՛ ռոտացիոն մեխանիզմում:

Համաձայն 2008թ. Համաշխարհային Բանկի կողմից իրականացված՝ Հայաստանի կրթական ոլորտի պետական ծախսերի ուսումնասիրության, ներկայիս՝ հիմնականում արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելը հանգեցրել է բարձրագույն կրթության համար պետական ֆինանսական միջոցների անարդար բաշխմանը: Պետական կրթաթոշակների և կրթական նպաստներ ստացողների՝ գերազանցապես արդյունքների վրա հիմնված ընտրությունից անհամամասնորեն շահել են ավելի

հարուստ ուսանողները. կրթական նպաստների 40 տոկոսը գնում է ավելի հարուստ քվինտիլները ներկայացնող ուսանողներին, որոնք վստահաբար դրա կարիքը չունեն: Կրթաթոշակների անարդար բաշխումն սահմանափակել է աղքատ տնային տնտեսությունների ուսանողների մատչումը բարձրագույն կրթությանը<sup>7</sup>:

Ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված կրթաթոշակների համակարգը հիմնված է բուհերին, ֆակուլտետներին, մասնագիտություններին և կրթական նպաստներին՝ պատմականորեն եկող հատկացումների վրա, ինչը հանգեցնում է պետական միջոցների անարդար և անարդյունավետ բաշխմանը: Ավելին, այն վճարում է մեկ ուսանողի հաշվով փաստացի ծախսերի միայն մի մասն, այդպիսով ստեղծելով երկակի վճարի կառուցվածք կրթաթոշակ ստացողների և չստացողների համար, ինչպես նաև շատ քիչ է խրախուսում բուհերին՝ իրենց գործունեությունը բարելավելու առումով<sup>8</sup>: Ֆինանսավորման նոր համակարգում պետք է համակցվեն պետական բուհերին տրվող ուղղակի ֆինանսավորման մի շարք տեսակները և ավելի լավ թիրախավորված կրթաթոշակները կարիքավորների համար<sup>9</sup>: Ավելին, իրենց եկամուտի աղբյուրներն ավելի բազմազան դարձնելու նպատակով, բուհերը պետք է փնտրեն ֆինանսավորման այլ աղբյուրներ, ինչպիսիք են՝ մասնավոր հատվածի մասնակցությունը և սեփական եկամտի ձևավորմանն ուղղված գործողությունները:

Սույն քաղաքականության մոդելավորման վերլուծությունն առաջարկում է արդյունքների և կարիքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելի ներդրում՝ որպես բնակչության ավելի ցածր եկամտով խմբերից եկող ուսանողների ներգրավվածությունն ավելացնելու միջոց, ինչպես նաև չափում է այդ առաջարկված քաղաքականության տարբերակի հնարավոր ազդեցությունը՝ եկամտային քվինտիլների միջև բուհերում ներգրավվածության բաշխման վրա:

Նոր՝ կարիքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելը կլրացնի ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված մոդելին՝ բարձրագույն կրթության ընդհանուր ծախսերի կառուցվածքում պետական ծախսերի մասնաբաժինն ավելացնելու նպատակով, և կնախագծվի այնպես, որպեսզի արդյունավետ կերպով նույնականացնի միայն ավելի ցածր եկամտով ընտանիքներից եկող ուսանողներին: Աղքատության մակարդակի սահմանման առկա գործիքները (ընտանեկան նպաստ) կարող են օգտագործվել որպես հիմք՝ որոշելու համար, թե ո՞վ և ի՞նչ չափով ունի ուսանողների նպաստների համակարգի կարիք: Սա թույլ կտա խուսափել այդ առաջադրանքի համար նոր մոդելի մշակումից, ինչը

<sup>7</sup>Հայաստանի կրթության ՊԾ հաշվետվություն., Գլուխ 8. Եզրակացություններ և Խորհուրդներ, էջ 72

<sup>8</sup>Հայաստանի կրթության ՊԾ հաշվետվություն., Գլուխ 8. Եզրակացություններ և Խորհուրդներ, էջ 75

<sup>9</sup>Օրինակ, Սալմի և Հաուպտմանը (Salmi & Hauptman) (2006) վերլուծում է բարձրագույն կրթության համար հատկացումների տարբեր մեխանիզմներ:

կնվագեցնի նման նոր մոդելի մշակման և փորձարկման համար անհրաժեշտ և՛ ծախսերը և՛ ժամանակը:

Առաջարկվող համակարգը կսահմանի ակադեմիական արդյունքների նվազագույն շեմը (ընդունելության և տարեկան քննությունների արդյունքները) և սահմանված շեմը հաղթահարողներին կտրամադրի որոշ միավորներ ընտանեկան նպաստների համակարգում՝ ուսանողական նպաստ ստանալու համար: Կրթաթոշակը կվճարի ուսման վարձի 20-100%՝ կախված ընտանիքի աղքատության մակարդակից և կրթաթոշակներին աջակցության համար հասանելի ֆինանսական միջոցներից:

### ***Ուսանողական վարկերի պետական ծրագիր***

Գոյություն ունի վարձերի՝ ծնողների կողմից վճարումներից և պետական նպաստներից տարբերվող՝ այլ ֆինանսական աղբյուրների պակաս: Որոշ հայկական առևտրային բանկեր վարկեր են տրամադրում ուսանողներին, սակայն դրանք ավելի մոտ են սպառողական վարկերին՝ բարձր տոկոսադրույքներով և այլ պայմաններով, որոնք ցածր եկամուտներ ունեցող ընտանիքներն իրենց թույլ տալ չեն կարող:

Բարձրագույն կրթության ծախսերի, այդ թվում՝ ուսման վարձերի և ուսանելու այլ ծախսերի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրի պակասը լրացնելու նպատակով կարելի է դիտարկել ուսանողական վարկերի այնպիսի սխեմայի ներդրում, որի թիրախը կլինեն ուսանելու գործընթացում իրապես հետաքրքրված անձինք:

Համաձայն ՊԾ հաշվետվության և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված՝ Կրթության Որակի և Համապատասխանության Երկրորդ Ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության, կառավարությանը խորհուրդ է տրվում դիտարկել պետական աջակցությամբ ուսանողական վարկերի մոդելը՝ որպես բարձրագույն կրթության ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմ, հույս ունենալով, որ նման մոդելը կընդլայնի բարձրագույն կրթության հասանելիությունն աղքատ տնային տնտեսություններից եկող ուսանողների համար<sup>10</sup>:

Սա կրկին քաղաքականության գործողություն է, որը կառավարությանն անհրաժեշտ է դիտարկել, քննարկել և որոշել, թե արդյո՞ք այն համահունչ է քաղաքականության տարբերակի հետ և արդյո՞ք կարող է իրականացվել սույն հաշվետվությունում առաջարկվող պայմանների շրջանակներում:

<sup>10</sup>Հայաստանի կրթության ՊԾ հաշվետվություն., Գլուխ 8. Եզրակացություններ և Խորհուրդներ, էջ 75



Ընդհանուր առմամբ, կառավարությանն անհրաժեշտ է ավելի լավ թիրախավորել սահմանափակ պետական ֆինանսական միջոցներն աղքատների համար՝ նրանց ուղղակիորեն տրվող կրթաթոշակների միջոցով, ինչպես նաև տրամադրել այլ ֆինանսավորման տարբերակներ, ինչպիսին են՝ կարիքավորների համար ուսանողական վարկերի լավ նախագծված մոդելը, ֆինանսավորման հիմքերն ավելի ճկուն և կարիքների վրա հիմնված դարձնելը, ինչպես նաև բուհերի ուղղակի ֆինանսավորման չափանիշները՝ նրանց ցուցադրած արդյունքների հետ կապելը:

Այս առումով, ուսանողական վարկերը կարող են ծառայել որպես բուհերի ուսման վարձերը վճարելու համար ֆինանսավորման լրացուցիչ գործիք: Ինչպես և կրթաթոշակների դեպքում, նոր ուսանողական վարկերի համակարգը կնախագծվի այնպես, որպեսզի արդյունավետ կերպով նույնականացնի ցածր եկամտով ընտանիքներից եկող ուսանողներին: Կառավարությունը կհիմնադրի Ուսանողական վարկերի զարգացման գործակալություն, որը պատասխանատու կլինի վարկավորման տեխնոլոգիայի և ընթացակարգի մշակման համար, ինչպես նաև կառավարության ֆինանսական միջոցների հատկացման և դիմողներին վարկերի տրամադրման նպատակով կհամագործակցի առևտրային բանկերի՝ որպես վարկատու կազմակերպությունների հետ:

Տոկոսադրույքը կսահմանվի այնպես, որ ծածկի կապիտալի արժեքը կառավարության համար, տոկոսադրույքի մարժան՝ ռիսկի փոխհատուցման համար, վարկերի սպասարկման ծախսերը և գործակալության գործառնական ծախսերը: Կառավարությունը կսուբսիդավորի տոկոսագումարների վճարն ուսման ժամանակահատվածում, ինչպես նաև ուսման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում, որն անհրաժեշտ է աշխատանք գտնելու համար:

Վարկի վերադարձի ժամանակացույցերի առումով, վարկի պայմանները կլինեն ճկուն՝ դեֆոլտային իրավիճակներից խուսափելու նպատակով:

## **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սույն ՔՄ վերլուծության հաշվետվությունը ստորև ուսումնասիրում է ոլորտին հատուկ խնդիրները և ներկայացնում է քաղաքականության միջամտությունների (միջամտությունների խառնուրդների) պոտենցիալ արդյունավետության գնահատում, որի նպատակը կլինի բարձրագույն կրթության ծառայությունների՝ ընտանիքների ֆինանսական կարողություններից կախվածության նվազեցումը: Հիմնվելով նախորդող գործունեության վրա, մեր թիմը փորձել է գնահատել հետևյալը.

- i. ի՞նչ կարժենան միջամտությունները և կառավարությունն ինչքան՞վ կարող է իրեն թույլ տալ՝ վճարել դրանց համար;
- ii. քաղաքականության միջամտությունների համահունչությունը տարբեր քաղաքական փաստաթղթերում հայտարարված քաղաքականության նկարագրություններին և նպատակներին;
- iii. միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում օգուտների բաշխման հնարավոր փոփոխությունները՝ հիմնված միջամտությունների հնարավոր արդյունավետության բացահայտման նպատակով վերջերս ԱՄՏ-ի կողմից կատարված հարցման արդյունքների վրա;
- iv. պետական գործակալությունների կողմից քաղաքականության միջամտությունների արդյունավետության մոնիտորինգի ձևերը;
- v. վերը նշվածի ընդհանրացումը՝ քաղաքականության ճշգրտման վերաբերյալ պետական գործակալություններին տրվող խորհուրդների հետ միասին:

## ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *Ավագ դպրոցի ծրագիր*

- Ավագ դպրոցի ծրագրի ծախսը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.
  1. Կապիտալ ծախսերի համար վերլուծվել են 2008, 2009, 2010 և 2011թթ. փաստացի ծախսերը՝ հետևյալ աղբյուրներից.
    - a. Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված՝ Առաջին և Երկրորդ կրթության որակի և համապատասխանության ծրագրերը;
    - b. ՀՀ Պետական Բյուջեն;
    - c. Դասագրքերի շրջանառու հիմնադրամը:
  2. Կիրառվել է կապիտալ ծախսերի հետևյալ բաժանումը.
    - a. Դպրոցների կահույք և սարքավորումներ;
    - b. Գրադարանի գրականություն;
    - c. Դասագրքեր և այլ ուսուցողական նյութեր;
    - d. Ավագ դպրոցների շենքերի վերանորոգում;
    - e. Ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստում:  
Դասեր c.-ն և e.-ն դիտարկվել են որպես կապիտալ ծախսեր, քանի որ դասագրքերը դպրոցներում օգտագործվում են 4-5 տարի, իսկ ուսուցիչների վերապատրաստումը կիրականացվի 5 տարին մեկ անգամ:
  3. Ընթացիկ ծախսերի գնահատման համար օգտագործվել են դպրոցների՝ մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման բանաձևի գործակիցները, որոնք 2011թ. համար սահմանվել են ՀՀ Ֆինանսների նախարարի և ՀՀ Կրթության նախարարի համատեղ որոշումով:
  4. Ընդհանուր կրթության ավագ դպրոցի մակարդակի ծախսերի տվյալները վերցվել են Ծրագրային Բյուջետավորման և Օգուտների Բաշխման Վերլուծություններից:

*Բուհերի ուսանողների պետական նպաստներ*

- Պետական նպաստների ծրագրի ծախսերը իրենցից ներկայացնում են.
  - i. անհրաժեշտ տեխնիկական աջակցության ծախսեր՝ դոնորային ֆինանսավորման միջոցով իրականացվելիք բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ձևաչափի մշակման նպատակով;
  - ii. 2011թ. միավորի միջին պետական նպաստը (կրթաթոշակ) բուհերի ուսանողների համար (տարեկան մոտ 700 ԱՄՆ դոլար):

*Ուսանողական վարկերի պետական ծրագիր*

- Ուսանողական վարկերի պետական ծրագրի ծախսերը բաղկացած են ծախսերի երկու տեսակներից.
  - i. գարգացման տեխնիկական աջակցության ծախսեր և ուսանողական վարկերի համակարգի պիլոտային ծրագիր;
  - ii. մեկ ուսանողի հաշվով մոտավոր վարկի միջին գումարը (մոտ 5000 ԱՄՆ դոլար);
  - iii. վարկառու ուսանողի համար վարկի վերադարձի տարեկան ծախսը՝ գնահատված ուսանողական վարկի սխեմայի դրամական հոսքերի միջոցով:

## **ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Ավագ դպրոցի ծրագիր*

- Ավագ դպրոցի ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.
  - i. Վերը նշված աղբյուրների և դասերի համար հավաքվել են 2008-2011թթ. փաստացի կապիտալ ծախսերը և հաշվարկվել են բոլոր աղբյուրների և դասերի ընդհանուր գումարները;
  - ii. Հաշվարկվել են միավորի ծախսերն ըստ ծախսային դասերի՝ օգտագործելով 2008-2011թթ. հիմնադրված ավագ դպրոցների թվաքանակը (100 դպրոց);
  - iii. Գոյություն ունեցող դպրոցների ֆինանսավորման բանաձևն օգտագործվել է հիմնադրված 100 դպրոցների ընթացիկ ծախսերի գնահատման համար.  $Y = A + BN$ ՝ օգտագործելով մեկ աշակերտի հաշվով հատկացումների գումարի՝ նոր ավագ դպրոցների գործակիցը (1.15), որը կառավարության կողմից ներկայացվել է 2010թ.;
  - iv. Ավագ դպրոցների հիմնադրման ողջ ժամանակահատվածի համար հաշվարկվել են ընդհանուր և տարեկան ընթացիկ և կապիտալ ծախսերը;
  - v. Օգտագործելով ԾԲՎ և ՕԲՎ տվյալները՝ հաշվարկվել են նույն ժամանակահատվածի համար ընթացիկ ու կապիտալ ծախսերը և դպրոցների քանակը՝ բազիսային դեպքի համար (չմիջամտելու դեպքի համար): Միջին

տարեկան միջամտության ծախսերի և միջին տարեկան բազիսային ծախսերի միջև տարբերությունն ընդունվել է որպես առաջարկվող միջամտության հետ կապված լրացուցիչ տարեկան ծախս:

*Բուհերի ուսանողների պետական նպաստներ*

- Պետական նպաստների ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.
  - i. Հաշվարկվել է բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ձևաչափի մշակման տեխնիկական աջակցության ծախսը, որը ներառում է մեկ միջազգային և երկու ազգային փորձագետների վարձատրության և փոխհատուցման բոլոր ծախսերը;
  - ii. Գնահատվել է Երկրորդ կրթության որակի և համապատասխանության ծրագրի շրջանակներում ֆինանսավորվելիք՝ արդյունքների և կարիքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելի ծախսը;
  - iii. Գնահատման մեջ ներառվել են նաև մի քանի այլ ծախսեր, ինչպիսիք են՝ նոր ֆինանսավորման ձևաչափի քննարկման նպատակով սեմինարների կազմակերպում, կարիքների գնահատման նպատակով ոլորտային հետազոտություն և իրավական փորձաքննություն՝ իրավական լիազորությունների միջավայրի ուսումնասիրության և գոյություն ունեցող օրենսդրությունում համապատասխան փոփոխություններ առաջարկելու նպատակով;
  - iv. Առաջարկվող ներդրումների մաշվածության համար ընդունվել է 5 տարի ժամկետ և միջամտության տարեկան արժեքի համար կիրառվել է ծախսի 1/5 մասը;
  - v. Արդյունքների և կարիքների վրա հիմնված նոր ֆինանսավորման մոդելի ներդրումից բխող լրացուցիչ կրթաթոշակների ծախսը գնահատվել է նոր կրթաթոշակ ստացողների պոտենցիալ թվի գնահատման միջոցով (որը բացատրված է «Արդյունավետության գնահատման մեթոդաբանություն» բաժնում, էջ 24) և օգտագործելով մեկ ուսանողի հաշվով կրթաթոշակը 2011թ. համար:

*Ուսանողական վարկերի պետական ծրագիր*

- Ուսանողական վարկերի պետական ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.
  - i. Ուսանողական վարկերի մեխանիզմի մշակման և փորձարկման համար տեխնիկական աջակցության նպատակով գնահատվել է մեկ միջազգային փորձագետ 2 ամիսների և 3 տեղական փորձագետների՝ 4 ամիսների ծախսերը, որոնք ներառելու են նրանց վարձատրությունը և միջազգային խորհրդատուի ճանապարհորդությունների և կացության ծախսերը, ինչպես նաև մշակված նյութերի թարգմանության համար անհրաժեշտ միջոցները;
  - ii. Գնահատման մեջ ներառվել են նաև մի քանի այլ ծախսեր, ինչպիսիք են՝ նոր ֆինանսավորման ձևաչափի քննարկման նպատակով սեմինարների

կազմակերպում, ուսուցողական ճանապարհորդություն 4 մասնագետների համար, կարիքների գնահատման նպատակով ոլորտային հետազոտություն և իրավական փորձաքննություն՝ իրավական լիազորությունների միջավայրի ուսումնասիրության և գոյություն ունեցող օրենսդրությունում համապատասխան փոփոխություններ առաջարկելու նպատակով;


- iii. Առաջարկվող ներդրումների մշակման համար ընդունվել է 5 տարի ժամկետ և միջամտության տարեկան արժեքի համար կիրառվել է ծախսի 1/5 մասը;
- iv. Դիտարկվել է վարկառու ուսանողի կողմից վարկի վերադարձի տարեկան ծախսը՝ գնահատված ուսանողական վարկի սխեմայով դրամական հոսքերի միջոցով;
- v. Մոտավոր տարեկան ծախսերը գումարվել են՝ ուսանողական վարկերի պետական ծրագրի ընդհանուր տարեկան ծախսերը չափելու նպատակով:

### ***Արդյունավետության մասին տվյալների նկարագրություն***

#### *Ավագ դպրոցի ծրագիր*


- Քվինտիլների միջև ներգրավվածության նոր բաշխման վերաբերյալ տվյալները և կրթության ոլորտի այլ տվյալները ստացվել են 2011թ. մայիսին Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից իրականացված՝ տնային տնտեսությունների հարցման միջոցով, որը ներառել էր մոտ 1600 տնային տնտեսություններ: Վերը բերված Գծապատկեր 5-ում ներկայացված է բարձրագույն կրթության համար առկա նոր բաշխումը: Միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում և ավագ դպրոցներում առկա բաշխումները ներկայացված են ստորև՝ Գծապատկեր 7-ում:
- Ավագ դպրոցի ծրագրի արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.
  - i. 2010թ. բուհական ընդունելության քննությունների արդյունքները՝ բոլոր մարզերում և մայրաքաղաք Երևանում՝ 2010թ. դրությամբ հիմնված բոլոր 50 ավագ դպրոցների համար, այդ թվում՝ շրջանավարտների թվաքանակը, բուհ դիմողների և ընդունվածների քանակը, որոնք ստացվել են դպրոցներից՝ հեռախոսային հարցման միջոցով;
  - ii. Նույն տվյալները 2010թ. բուհական ընդունելության քննությունների արդյունքների վերաբերյալ՝ Հայաստանի բոլոր դպրոցների մասով՝ ստացված Գնահատման և թեստավորման կենտրոնից, որը հանդիսանում է քննությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու գործակալություն:

**Գծապատկեր 7. Միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում (10-12) և ավագ դպրոցներում ներգրավվածության բաշխումը, 2011թ.**



Գծապատկեր 8-ում ստորև ներկայացված են ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների շրջանավարտների համար դիմողներ/ավարտողներ և ընդունվողներ/ավարտողներ հարաբերակցությունները՝ 2010թ. դպրոցների ավարտական և բուհերի ընդունելության ժամանակահատվածի ընթացքում: Այս գծապատկերը ցույց է տալիս ավագ դպրոցների համար ավելի լավ իրավիճակ՝ հասարակ միջնակարգ դպրոցների համեմատությամբ, և՛ բուհեր ընդունվելու ցանկության (դիմումներ) և՛ այնտեղ հայտնվելու հարցում:

**Գծապատկեր 8. 2010թ. դպրոցների ավարտական և բուհերի ընդունելության ժամանակահատվածի ընթացքում դիմորդներ/շրջանավարտներ և ընդունվողներ/շրջանավարտներ հարաբերակցությունները**




*Բուհերի ուսանողների պետական նպաստներ*

- Պետական նպաստների ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.

- i. Քվինտիլների միջև բարձրագույն կրթության ոլորտում ներգրավվածության նոր բաշխման վերաբերյալ տվյալները՝ ստացված 2011թ. մայիսին Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից իրականացված՝ տնային տնտեսությունների նոր հարցման միջոցով: Բարձրագույն կրթության ոլորտում նոր բաշխումը ներկայացված է վերը բերված Գծապատկեր 6-ում:
- ii. Ուսման վարձերը վճարելու անկարողության պատճառով բուհեր չդիմած շրջանավարտների՝ ըստ քվինտիլների բաշխման վերաբերյալ տվյալները ստացվել են վերը նշված հարցումից: Այդ բաշխումը ցույց տվող գրաֆիկը ներկայացված է ստորև՝ Գծապատկեր 9-ում:


**Գծապատկեր 9. Ֆինանսական պատճառներով բուհեր չդիմած՝ դպրոցների շրջանավարտները**



*Ուսանողական վարկերի պետական ծրագիր*

- Ուսանողական վարկերի պետական ծրագրի արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.
  - i. Ուսանողական վարկեր վերցնելուն պատրաստ տնային տնտեսությունների քանակը ստացվել է ԱՄՏ-ի կողմից վերջերս իրականացված՝ տնային տնտեսությունների հարցման արդյունքներից:
  - ii. Պահանջարկի մոդելավորում/կանխատեսում. Շահառուների տարեկան թվաքանակի տոկոսային փոփոխությունները հաջորդ տարիների համար հիմնված են Ուսանողական վարկերի զարգացման թիմի (ՀԲ ԾԻԳ) կողմից մշակված ենթադրությունների վրա:

**Գծապատկեր 10. Ուսանողական վարկ վերցնել ցանկացող տնային տնտեսությունների բաշխումը**




**Արդյունավետության գնահատման մեթոդաբանություն**

*Ավագ դպրոցի ծրագիր*

- Ավագ դպրոցի ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.
  - i. Հիմնվելով ԱՄՏ-ի կողմից իրականացված՝ տնային տնտեսությունների հարցման արդյունքների վրա, եկամտային բոլոր քվինտիլների համար հաշվարկվել է ներգրավվածությունը կրթության տարբեր մակարդակներում, այդ թվում՝ ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում (տե՛ս Գծապատկեր 7 վերը և Գծապատկեր 11 ստորև):


**Գծապատկեր 11. Բարձր դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակում ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտների ներկա համամասնությունների համեմատություն**






- ii. Օգտագործելով 2010/2011թթ. ուսումնական տարում նոր ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտների փաստացի թվաքանակները, ինչպես նաև տնային տնտեսությունների պատասխանները՝ կապված միջնակարգ ցածր դասարանների իրենց երեխաներին ավագ դպրոցներ ուղարկելու պլանների հետ, հաշվարկվել է 10-12 դասարանների աշակերտների նոր հիպոթետիկ բաշխում ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների միջև՝ բոլոր քվինտիլների համար, որն արտացոլել է տնային տնտեսությունների՝ նոր ավագ դպրոցների նկատմամբ հետաքրքրության աճ (տե՛ս ստորև Գծապատկերներ 12 և 13):

**Գծապատկեր 12. Միջնակարգ ցածր դասարանների իրենց երեխաներին ավագ դպրոցներ ուղարկելու ցանկություն ունեցող տնային տնտեսությունների բաշխումը**




**Գծապատկեր 13. Բարձր դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակում ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտների հնարավոր ապագա համամասնությունների համեմատություն**



- iii. Գծապատկեր 14 ցույց է տալիս, որ եթե ավագ և միջնակարգ դպրոցներում ներգրավվածության ներկա բաշխումն ըստ քվինտիլների համընկներ ծնողների՝ միջնակարգ ցածր դասարանների իրենց երեխաներին ավագ դպրոցներ ուղարկելու պլանների հետ, ապա ավագ դպրոցների աշակերտների համամասնությունը շատ ավելի բարձր կլիներ քան ներկայումս է: Մա կարելի է բացատրել այն փաստով, որ առանձին գործող ավագ դպրոցները վերջերս են բացվել և ակնկալվող բաշխումն ունենալու համար պետք է անցնի մի քանի տարի:
- iv. Բուհերի քննությունների ընթացքում ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտների ընդունվելու մակարդակների վերլուծությունը ցույց է տալիս, որ ավագ դպրոցի շրջանավարտների ընդունվելու մակարդակը (մոտ 54%) համարյա երկու անգամ բարձր է միջնակարգ դպրոցի շրջանավարտների նույն մակարդակից (մոտ 28%):
- v. Օգտագործելով ուսանողների ընդհանուր թվաքանակը 2010/2011թթ. ուսումնական տարվա համար և 10-12 դասարանների աշակերտների հիպոթետիկ բաշխումն ավագ և միջնակարգ դպրոցների միջև՝ բոլոր քվինտիլների համար, ինչպես նաև ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտներից բուհեր ընդունվողների տոկոսային հարաբերակցությունները, յուրաքանչյուր քվինտիլի համար հաշվարկվել են բուհերի ուսանողների նոր հիպոթետիկ թվաքանակներ, որը կհամապատասխաներ ավագ դպրոցներում ներգրավվածության աճի դեպքին: Ստորև բերված Գծապատկեր 14-ում ներկայացված են բարձրագույն կրթությունում ներգրավվածության ներկա և հիպոթետիկ բաշխումները քվինտիլների միջև:

**Գծապատկեր 14. Բարձրագույն կրթությունում քվինտիլների միջև ներգրավվածության ներկա և հիպոթետիկ համեմատական բաշխումները**




*Բուհերի ուսանողների պետական նպաստներ*

- Բուհերի ուսանողների պետական նպաստների ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.
  - i. Տնային տնտեսությունների հարցման առաջին քվինտիլի այն մասնակիցների թվաքանակը, որոնք չեն դիմել բուհական ուսման ֆինանսական պատճառներով, հաշվարկվել է ԱՄՏ-ի կողմից իրականացված հարցման արդյունքներով:
  - ii. Ենթադրելով, որ նոր կարիքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելը լրացնելու է ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված մոդելին և նախագծվելու է այնպես, որպեսզի արդյունավետ կերպով նույնականացնի միայն առաջին քվինտիլից եկող ուսանողներին, ֆինանսական պատճառներով բուհական ուսման չդիմած՝ ՏՏ հարցման առաջին քվինտիլի մասնակիցների թվաքանակը բազմապատկվել է բուհեր ընդունվելու՝ միջնակարգ դպրոցների շրջանավարտների տոկոսով, որպեսզի գնահատվի առաջին քվինտիլից եկող հնարավոր լրացուցիչ ուսանողների թվաքանակն այն դեպքում, եթե նրանք բուհական ուսման համար պետական կրթաթոշակ ունենալու հնարավորություն ստանան:
  - iii. Ապա քվինտիլների նոր բաշխումը կիրառվել է բուհերի ներկայիս ուսանողների ընդհանուր թվաքանակի համար՝ հնարավոր լրացուցիչ ուսանողների ընդհանուր թվաքանակն ստանալու նպատակով:
  - iv. Աղքատության մակարդակի սահմանման առկա գործիքները (ընտանեկան նպաստ) կարող են օգտագործվել որպես հիմք՝ որոշելու համար, թե ո՞վ և ի՞նչ չափով ունի ուսանողների նպաստների համակարգի կարիք: Սա թույլ կտա խուսափել այդ առաջադրանքի համար նոր մոդելի մշակումից, ինչը կնվազեցնի նման նոր մոդելի մշակման և փորձարկման համար անհրաժեշտ և՛ ծախսերը և՛ ժամանակը:
  - v. Առաջարկվող համակարգը կսահմանի ակադեմիական արդյունքների նվազագույն շեմը (ընդունելության և տարեկան քննությունների արդյունքները) և սահմանված շեմը հաղթահարողներին կտրամադրի որոշ միավորներ ընտանեկան նպաստների համակարգում՝ ուսանողական նպաստ ստանալու համար:
  - vi. Ինչպես նշված է վերը (i) կետում, այս նոր ֆինանսավորման մոդելը ենթադրաբար լրացնելու է գոյություն ունեցող՝ արդյունքների վրա հիմնված համակարգին, ինչը թույլ կտա ավելացնել պետության մասնակցությունը բարձրագույն կրթության ֆինանսավորման գործում, քանի որ ֆինանսավորման ներկա մակարդակը (ընդհանուր ԲԿ ֆինանսավորման մոտ 20%) չափազանց ցածր է՝ ՏՀԶԿ և ԵՄ երկրներում առկա նույն ցուցանիշի համեմատությամբ:

Ստորև բերված Գծապատկեր 15-ում ներկայացված է ԲԿ ներգրավվածության ներկա և գնահատված (հիմնված պետական նպաստների ծրագրի ենթադրությունների վրա) բաշխումների համեմատությունը:

**Գծապատկեր 15. Բարձրագույն կրթությունում ներգրավվածության ներկա և գնահատված համեմատական բաշխումները քվինտիլների միջև**




*Ուսանողական վարկերի պետական ծրագիր*

- Ուսանողական վարկերի պետական ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.
  - i. ԱՍՍ-ի կողմից իրականացված հարցման արդյունքները թույլ տվեցին բոլոր քվինտիլներում գնահատել այն հարցվողների տոկոսը, որոնք ցանկանում էին վերցնել ուսանողական վարկ՝ որպես իրենց բուհական ուսման ֆինանսավորման գործիք:
  - ii. Ենթադրելով, որ նոր ուսանողական վարկերի մոդելը նախագծվելու է այնպես, որպեսզի արդյունավետ կերպով նույնականացնի միայն առաջին քվինտիլից եկող ուսանողներին, ֆինանսական պատճառներով բուհական ուսման չդիմաձեռնող SS հարցման առաջին քվինտիլի մասնակիցների թվաքանակը բազմապատկվել է ուսանողական վարկ վերցնել ցանկացող՝ տնային տնտեսությունների հարցման առաջին քվինտիլի հարցվողների տոկոսով և բուհեր ընդունվելու՝ միջնակարգ դպրոցների շրջանավարտների տոկոսով, որպեսզի գնահատվի առաջին քվինտիլից եկող հնարավոր լրացուցիչ ուսանողների թվաքանակն այն դեպքում, եթե նրանք բուհական ուսման համար պետական ուսանողական վարկ ստանալու հնարավորություն ունենան:

iii. Ապա քվինտիլների նոր բաշխումը կիրառվել է բուհերի ներկայիս ուսանողների ընդհանուր թվաքանակի համար՝ հնարավոր լրացուցիչ ուսանողների ընդհանուր թվաքանակը հաշվարկելու նպատակով:


Ստորև բերված Գծապատկեր 16-ում ներկայացված է ԲԿ ներգրավվածության ներկա և գնահատված (հիմնված ուսանողական վարկերի ծրագրի ենթադրությունների վրա) բաշխումների համեմատությունը:

**Գծապատկեր 16: Բարձրագույն կրթությունում ներգրավվածության ներկա և գնահատված համեմատական բաշխումները քվինտիլների միջև**



Մենք նաև գումարել ենք բոլոր երեք միջամտությունների հնարավոր ազդեցությունները՝ գումարային արդյունքը տեսնելու նպատակով: Ստորև ներկայացված Գծապատկեր 17-ում տրված է քաղաքականության երեք սցենարների այդպիսի ազդեցությունը, որը ցույց է տալիս ԲԿ ներգրավվածության բաշխման փոփոխություն այն դեպքում, եթե բոլոր երեք սցենարներն իրականացվեն միասին:

**Պատկեր 17. Բարձրագույն կրթությունում ներգրավվածության ներկա և գնահատված համեմատական բաշխումները քվինտիլների միջև**



Կարծում ենք, որ բոլոր երեք միջամտությունների համակցված ազդեցությունը պակաս չի լինի յուրաքանչյուր միջամտության առանձին ազդեցությունների հանրագումարից, քանի որ ն՝ թիրախային խմբերը և՛ հաշվարկի մեթոդաբանությունները տարբեր են: Բացի դրանից, այդ երեք միջամտությունները թիրախավորում են ցածր եկամուտ ունեցող խմբերին՝ իրենց վարքի տարբեր փուլերում, ինչը նշանակում է օրինակ, որ առաջին միջամտության (ավագ դպրոցների միջոցով) դրական ազդեցությունը կավելացնի բուհեր դիմող ցածր եկամտով աշակերտների բազան՝ առանց մրցակցելու ներկայիս ձևաչափում արդեն իսկ ներգրավվածների հետ: Իրականում, առաջին միջամտության անհատական ազդեցությունը ոչ թե մրցակցում է շահառուների համար մյուս միջամտությունների հետ, այլ նաև կարող է լրացուցիչ իմպուլս հաղորդել՝ մյուս երկուսի հաջողության համար: Ինչևէ, առաջին միջամտության նման բազմապատկիչ ազդեցությունը՝ մնացած երկուսի նկատմամբ, սույն հաշվետվությունում չի ներկայացված (գերբարդացնելուց խուսափելու համար), սակայն օգտագործվում է պարզ գումարային ձևով:

Այսպիսով, ավագ դպրոցի քաղաքականության գործողությունը գործ ունի ավագ դպրոցի աշակերտների թվաքանակի պոտենցիալ աճի հետ և չափում է առաջին քվինտիլի ուսանողների պոտենցիալ թվաքանակը՝ օգտագործելով ավագ դպրոցի շրջանավարտների բուհ ընդունվելու գնահատված մակարդակը (54%)։ Կարիքների վրա հիմնված կրթաթոշակների տարբերակը չափում է այն լրացուցիչ աշակերտների թվաքանակը, որոնք կորոշեին դիմել բուհեր, եթե պետական նպաստներ ստանալու հնարավորություն ունենաին, իսկ ուսանողների վարկերի տարբերակը չափում է այն լրացուցիչ ուսանողների թվաքանակը, որոնք ուսանողական վարկեր կվերցնեին՝ եթե այդպիսիները լինեին: Վերջապես, վերջին երկու տարբերակները հաշվարկում են առաջին քվինտիլի ներգրավվածության պոտենցիալ ավելացումը՝ օգտագործելով միջնակարգ դպրոցների

շրջանավարտների բուհ ընդունվելու մակարդակը (28%): Այդպիսով, առաջարկված բոլոր նախաձեռնությունները կարող են համարվել իրար հետ չմրցակցող:

## ԱՐՁԱՆՈՒՄՆԵՐ

2011թ. ԱՄՏ-ն իրականացրել էր ծախսերի արդյունավետության վերլուծություն՝ գնահատելու համար այն քաղաքականության միջամտությունների ազդեցությունները և ծախսերը, որոնք նպատակ ունեն նվազեցնելու քվինտիլների միջև անհավասարակշռությունը Հայաստանում՝ բարձրագույն կրթության համակարգին մատչում ունենալու հարցում: Աղյուսակ 2-ը ստորև ամփոփում է առաջարկված յուրաքանչյուր քաղաքականության սցենարի գնահատված ազդեցությունը և դրա հետ կապված ծախսերը:

### Աղյուսակ 2. Քաղաքականության տարբերակների ծախսերի և ազդեցությունների համեմատությունը

Քաղաքականության տարբերակներ	Ծածկույթ/Շահառուներ	Միջամտության ընդհանուր ծախսը, հազար ՀՀ դրամ	Խնայողություններ, հազար ՀՀ դրամ	Միջամտության զուտ ծախսը, հազար ՀՀ դրամ	Ծ/Ա գործակից, հազար ՀՀ դրամ
Տարբերակ 1. ավագ դպրոցների ցանցի ստեղծում	4,257.0	7,693,121.3	7,189,934.3	503,187.0	118.2
Տարբերակ 2. Կարիքների վրա հիմնված պետական նպաստների տրամադրում	4,142.0	1,294,288.8	0.0	1,294,288.8	312.5
Տարբերակ 3. Ուսանողական վարկերի սխեմայի մշակում և ներդրում	1,657.0	1,108,442.8	0.0	1,108,442.8	668.9

- Ծածկույթ/Շահառուներ սյունակում տրված թվերը ներկայացնում են յուրաքանչյուր քաղաքականության տարբերակի դեպքում գնահատված՝ ամենացածր քվինտիլից եկող լրացուցիչ ուսանողների պոտենցիալ թվաքանակը: Առաջին տարբերակն ունի

ամենամեծ ընդհանուր ծախսերը, սակայն այս քաղաքականության տարբերակի գուտ ծախսը ամենացածրն է, քանի որ ավագ դպրոցների նոր համակարգը մասնակիորեն փոխարինում է միջնակարգ դպրոցների հին համակարգի բարձր դասարաններին, և այդպիսով, կառավարության սահմանային գուտ ծախսը կլինի շատ ավելի ցածր: Արդյունքում, այն ունի ամենացածր միավորի գուտ ծախսը: Առաջին երկու տարբերակները պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից, մինչդեռ երրորդ տարբերակի ծախսը հիմնականում ներկայացնում է վարկառուների ծախսերը՝ կապված իրենց ուսանողական վարկերի սպասարկման հետ: Ինչևէ, ուսանողական վարկերի մոդելում ներդնելու համար Կառավարությանն անհրաժեշտ տարեկան գումարը կազմում է մոտ 1,839,270.0 հազար ՀՀ դրամ:

- Հետաքրքիր է, որ նոր քաղաքականությունների ներդրման սահմանային ծախսերի ընդհանուր գնահատումը՝ որպես պետական բյուջեի վրա լրացուցիչ բեռ, ցույց է տալիս, որ բոլոր երեք տարբերակներն էլ բավականին մատչելի են, քանի որ դրանք կրթության բյուջեի ընդհանուր գումարի մի փոքր մասն են կազմում: Առաջարկված տարբերակների գուտ ծախսը կազմում է 2011թ. կրթական ոլորտին փաստացի ուղղված պետական հատկացումների 0.49%, 1.26% և 1.08% կամ հանրագումարում՝ 2.82%:
- Աղյուսակ 3-ում ստորև ներկայացված են կրթության ոլորտին պետական հատկացումները 2006թ-ից մինչև 2012թ.: Բերված տվյալները ցույց են տալիս, որ նշված ժամանակահատվածում պետական հատկացումների միջին տարեկան աճը կազմել է մոտ 5.5%: Եթե ենթադրենք, որ աճի այս տեմպը կարելի է պահպանել ապագայում, ապա այն թույլ կտա միաժամանակ իրականացնել բոլոր երեք տարբերակները:

**Աղյուսակ 3. Կրթության ոլորտին պետական տարեկան հատկացումները 2006 – 2012թթ.**

մլն. ՀՀ դրամ

	2006 (փաս- տացի)	2007 (փաս- տացի)	2008 (փաս- տացի)	2009 (փաս- տացի)	2010 (փաս- տացի)	2011 (փաս- տացի)	2012 (բյուջեով նախատեսված)
Ընդհանուր ծախսեր	76,863.6	89,218.4	103,584.5	107,613.3	97,790.1	103,077.6	105,554.3
Փոփոխության %		16.1%	16.1%	3.9%	-9.1%	5.4%	2.4%



## ՔՆԱՐԿՈՒՄ

- Ինչպես ցույց են տալիս Գծապատկերներ 14, 15 և 16-ը, ավագ դպրոցի ծրագիրն ավելացնում է առաջին քվինտիլի ներգրավվածությունն 8.6%-ից մինչև 10%, պետական նպաստների ծրագիրը նույն ցուցանիշն ավելացնում է 8.6%-ից մինչև 11.9%, իսկ ուսանողական վարկերի ծրագիրը՝ 8.6%-ից մինչև 9.9%: Մյուս կողմից՝ համաձայն Գծապատկեր 17-ի, բոլոր 3 տարբերակների համակցված ազդեցությունն առաջին քվինտիլի ներգրավվածության աճն է 8.6%-ից մինչև 13.9%: Համեմատելով այս արդյունքներն քաղաքականության պայմանական նպատակի հետ, այն է՝ ԲԿ-ում առաջին քվինտիլի ներգրավվածության ավելացում մինչև 15%-ի շեմը, կարելի է տեսնել, որ յուրաքանչյուր տարբերակն առանձին ունի ավելի փոքր ազդեցություն քան սահմանված նպատակն է: Նույնիսկ բոլոր երեք տարբերակների համակցված արդյունքը մոտ 1.1%-ով ավելի ցածր է քան նպատակայինը: Այսպիսով, սահմանված նպատակին հնարավորինս մոտ լինելու համար առաջարկում են իրականացնել քաղաքականության բոլոր 3 տարբերակները միասին:
- Ինչպես նկարագրված է Արդյունավետության մեթոդաբանության բաժնի վերջում՝ նկարիքների վրա հիմնված կրթաթոշակների և՛ ուսանողական վարկերի տարբերակներում ներգրավվածության աճը գնահատվել է հիմնվելով միայն միջնակարգ դպրոցի շրջանավարտների՝ բուհ ընդունվելու մակարդակի վրա: Սակայն, բոլոր երեք սցենարների միաժամանակյա ներդրման դեպքում, կրթաթոշակների և վարկերի տարբերակներին լրացուցիչ նոր դիմողների մեծ մասը կլինի ավագ դպրոցներից և, այդպիսով, նրանց բուհ ընդունվելու տոկոսն ավելի բարձր կլինի: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ առաջին քվինտիլի համար ընդհանուր ներգրավվածության մակարդակը կհասնի 15%-ի շեմին միջնաժամկետ հեռանկարում:
- Առաջարկված ավագ դպրոցի ծրագրի երկրորդական ազդեցություններից մեկն է հանդիսանում դրա ազդեցությունը նաև մյուս քվինտիլներում բուհերի ուսանողների թվաքանակի աճի վրա: Այս քաղաքականության տարբերակը չի կարող ուղղակիորեն թիրախավորվել միայն առաջին քվինտիլին. դրանից կօգտվեն բոլոր քվինտիլները: Բացի դրանից, մենք չենք կարող ներառել մասնավոր ուսուցիչների միջոցով ուսումնառության գործոնը, որը դեռևս գոյություն ունի և՛ ավագ դպրոցի և՛ միջնակարգ դպրոցի շրջանավարտների պարագայում, այդպիսով այդ գործոնը համարելով մեր գնահատականների վրա չազդող (չնայած, որ այս գործոնը նույնպես կարող է որոշ կշիռ ունենալ):
- Երկրորդ և երրորդ տարբերակների հետ կապված գլխավոր ենթադրությունը, որը պետք է կլինի ստուգել, այն է, որ պետական նպաստների և ուսանողական վարկերի ծրագրերը կարող են նախագծվել այնպես, որ արդյունավետ կերպով թիրախավորեն միայն առաջին քվինտիլը: Բացի դրանից, ուսանողական վարկերի ծրագիրն ունի 95%

վերադարձելիության մակարդակի մասին ենթադրություն, որի փաստացի ցուցանիշը կարող է տարբեր լինել:

- Առաջարկվող ծրագրերի պոտենցիալ մարտահրավերներից մեկը պետական բյուջեում միջոցների առկայությունն է, որոնք անհրաժեշտ են բոլոր երեք ծրագրերի միաժամանակյա իրականացման համար: Այն դեպքում, եթե կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջեի հատկացումները հնարավոր չլինի ավելացնել տարեկան առնվազն 5.5%-ով, ապա առաջարկված տարբերակները կարելի է իրականացնել աստիճանաբար:

## **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Սույն վերլուծությամբ սահմանված քաղաքականության նպատակին հասնելու համար ԱՄՏ-ի թիմը խորհուրդ է տալիս բոլոր երեք քաղաքականությունների այլընտրանքների կոմպլեքս իրականացում: Ավելի լավ կլինի, եթե ՀՀ Կրթության և գիտության նախարարությունն առաջարկություններ մշակի 2012թ. ՄԺԾԾ/Բյուջե ցիկլի համար: Եթե ՄԺԾԾ-ի փուլը բաց թողնվի, ապա դեռևս հնարավոր կլինի միջոցների՝ 2013 թվականի մանրասն բյուջետավորման ժամանակ հատկացնելու տարբերակը:

Անհրաժեշտ է, որ խորհուրդ տրված քաղաքականության տարբերակների նախագծերը մշակվեն ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ՀՀ Ֆինանսների նախարարության ՄԺԾԾ փաստաթղթում և տարեկան պետական բյուջեի մասին օրենքում:

### ***Օրենսդրության բարելավումներ***

Կրթության ոլորտի օրենսդրությունում զգալի փոփոխություններ անհրաժեշտ չեն: Բացի դրանից, ՀՀ Կառավարությունն արդեն իսկ որդեգրել է առանձին գործող ավագ դպրոցների համակարգի և բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունները (որի հիմնավորման գործում դեր են ունեցել ԱՄՏ-ի կողմից նախկինում կատարված բացահայտումները): Վերջինս առաջարկում է կարիքների վրա հիմնված պետական նպաստների ծրագրի ներդրում և պլանավորում է նման սխեմայի մշակում ամենամոտ ապագայում: Նաև, կառավարությունը պետք է մշակի և ընդունի ուսանողների պետական վարկերի մոդելը:

### ***Ռիսկերի կառավարում***

Խորհուրդ տրված քաղաքականության այլընտրանքների հետ կապված զգալի ռիսկեր չկան: Սակայն, դեռևս առկա է պետական բյուջեի հատկացումների ռիսկը:

կառավարությունը կարող է չգտնել խորհուրդ տրված լուծումների իրականացման համար պահանջվող ռեսուրսները: Ինչևէ, ինչպես արդեն նշվել է վերը, բոլոր երեք տարբերակների ընդհանուր ծախսը կազմում է կրթության ոլորտին ուղղվող ընդհանուր պետական հատկացումների միայն 2.8%-ը: Հաշվի առնելով այն փաստը, որ կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում բարձրագույն կրթության ոլորտում հավասարության և մատչումի խնդիրներին՝ կարծում ենք, որ տարեկան մոտ 2.9 մլրդ. ՀՀ դրամի ֆինանսավորման հատկացումը՝ սկսած 2013թ. բյուջեից, մատչելի է և ֆինանսապես կայուն:

## ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ

Աղյուսակ 4-ում ստորև ներկայացված են խորհուրդ տրվող գործողությունների փաթեթը, որոնք պետք է իրականացվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ սույն հաշվետվությունում խորհուրդ տրված քաղաքականության փոփոխություններին նպաստելու համար: Խորհուրդ տրված մոտեցումը ներդնելու վերաբերյալ սկզբունքային համաձայնության դեպքում՝ քաղաքականությունը կարող է ֆինանսավորվել և մեկնարկել 2013թ.:

### Աղյուսակ 4. Քաղաքականության վերաբերյալ խորհուրդների իրականացմանը նպաստելու ժամանակացույց

Քայլեր	Սեպ-12	Հոկ-12	Նոյ-12	Դեկ-12	Հունվ-13	Փետր-13	Մար-13	Ապր-13	Մայ-13	Հուն-13
Քայլ 1: ԱՍՏ-ի կողմից ներկայացված ՔՄ հաշվետվության ներքին քննարկում՝ նախարարությունում՝ որոշում կայացնելու համար										
Քայլ 2: Քննարկում Ֆինանսների նախարարության, մասնագիտական շրջանակների և քաղաքացիական հասարակության հետ										
Քայլ 3: Քաղաքականության փաստաթղթի ներկայացում Կառավարությանը										
Քայլ 4. Կառավարության կողմից քննարկում, ներկայացում կառավարության նիստին և										

<i>հաստատում</i>										
<i>Քայլ 5: Կառավարության կողմից հաստատված քաղաքականության առաջարկի արտացոլում ՄԺԾԾ 14-16թթ. հայտի նախագծում (ԿԳՆ կողմից)</i>										
<i>Քայլ 6: Հաշվետվողականության և մոնիտորինգի համակարգի և մեխանիզմների մշակում և ներդրում</i>										
<i>Քայլ 7: Հանրային լուսաբանման միջոցառումներ, հանրային լուումներ, համապատասխան ներկայացուցիչների մամլո ասուլիսներ</i>										